# «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության Կոտայքի մարզի, Չարենցավան համայնքի՝ Չարենցավան քաղաքի՝ Արտադրական գոտի Երևանյան 2, Երևանյան 2/6, Գործարանային փողոց 1, Գործարանային փողոց 1/3 հասցեներում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

(Լրամշակում)

*Ձեռնարկող՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ*

ACKE ГРУП
ASCE GROUP
02600588

# Բովանդակություն


1.Ընդհանուր տեղեկատվություն ..... 4

2. Հավելվածներ ..... 5

3. Օգտագործվող հապավումները ..... 6

4.Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը ..... 6

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ ..... 9

6.Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը ..... 10

7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման  հայտի մշակման հիմքերը ..... 11

8.Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը ..... 11

9.Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը ..... 16

9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը ..... 16

9.2. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները ..... 16

9.3. Սեյսմիկա և երկրաբանություն ..... 17

9.4. Կլիմա և օդային ավազան ..... 17

9.5. Հողային ռեսուրսներ ..... 22

9.6.Ջրային ռեսուրսներ ..... 23

9.7. Կենսաբազմազություն ..... 26

9.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ ..... 30

9.9. Պատմության և մշակութային հուշարձաններ ..... 31

9.10. Սոցիալ-տնտեսական ..... 32

10. Նախատեսվող գործունեության բնութագիրը, հզորությունները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները ..... 34

11. Շինարարության փուլ ..... 36

11.1 Շինհրապարակ. ..... 36

11.2 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ. ..... 37

11.3 Հողային ռեսուրսներ. ..... 37

11.4 Ջրային ռեսուրսներ, կեղտաջրերի հեռացում; ..... 38

11.5 Թափոններ. ..... 38

11.6 Սոցիալական. ..... 38

11.7 Բարեկարգում. ..... 38

11.8 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը ..... 39

13. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, մարդու առողջություն ..... 41

13.1 Շինարարության փուլ ..... 42

13.2. Շահագործման փուլ. ..... 46

14.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը (Բնապահպանական կառավարման պլան) ..... 48

14.1 Շինարարության փուլ. ........................................................................................................ 48
14.2 Շահագործման փուլ. ........................................................................................................ 53
15. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան .................................................... 56
16. Մոնիթորիգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր)......... 68
17. Հանրային քննարկումներ ........................................................................................................ 70
18.Վթարային իրավիճակներ և հնարավոր դադարեցում. /Փակման փուլ/ ................................ 70
19.Բողոքների ընթացակարգ ........................................................................................................ 71
Գրականություն........................................................................................................................ 72

# 1.Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Հայտ | «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության Կոտայքի մարզի, Չարենցավան համայնքի, Չարենցավան քաղաքի․Արտադրական գոտի Երևանյան 2, Երևանյան 2/6, Գործարանային փողոց 1, Գործարանային փողոց 1/3 հասցեներում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման նախնական գնահատման հայտ: |
| Ձեռնարկող | «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ |
| Ձեռնարկողի իրավաբանական հասցեն | Ք Չարենցավան, Երևանյան 2 |
| Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ | Չարենցավան քաղաքի․Արտադրական գոտի Երևանյան 2, Երևանյան 2/6, Գործարանային փողոց 1, Գործարանային փողոց 1/3 հասցեներ: |
| Պատվիրատուի հեռախոս, էլեկտրոնային փոստ | 095666682: Harout Charoyan <h.charoyan@umt.cc> |
| Գնահատման հայտի նախագծող | «Նովալ»ՍՊԸ |
| Հայտ մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ | Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 arm_eia@outlook.com |

.

## 2. Հավելվածներ

**Հավելված 1**. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների Պետական գրանցման վկայականներ։

**Հավելված 2**. ՀԷՑ տեղեկանք

**Հավելված 3.** Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիան։

**Հավելված 4.** Արևակայանի կոորդինատները։

**Հավելված 5.** համայնքապետարանի նախնական համաձայնությունը

**Հավելված 6.**Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկ։

## 3. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՕԳ՝ օդային գիծ
ՀԷՑ՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր
Վտ՝ Վատտ
ՖՎ՝ ֆոտովոլտային
ՍՊԸ՝սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
կՎտ՝ կիլովատտ
ԿՎԱ՝ կիլովոլտ-ամպեր
ՄՎտԺ՝ մեգավատտ ժամ

## 4.Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք**- Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն: Համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները:
Ուստի ներկայացվում է նախնական գնահատման հայտ, փորձաքննական եզրակացություն ստանալու համար:
**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 19994թ. և լրամշակված 2022թ.)**- կարգավորում է մթնլորոտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
**«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ. )** -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց զբաղված կամ պատմականորեն իրենց հետ

կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

**«Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006**)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

**«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ. )** – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

**«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)**–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.)** -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպաիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի,

հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

**«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ. )** - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)**-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

**«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002)** - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

**«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)**– Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

**«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք** (Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին) Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

## ՀՀ կառավարության որոշումներ

- **ՀՀ կառավարության 19 նոյեմբեր 2014թ**. «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ**. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ.** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 31 հուլիսի .2014թ.** ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ**. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ.** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 18 մայիսի 2000 թվականի** 1000 Վ Ո ԼՏ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնները հաստատելու մասին N 249 որոշում:
- **ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի 2006 թվականի «**Էլեկտրակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշում:

## 5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի Էներգետիկայի բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «արևային էլեկտրակայաններ՝ 3 հա և ավելի տարածք զբաղեցնող»: Նախատեսվող արևային ֆոտովոլտային կայանը զբաղեցնում է 21,9 հա տարածք:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի և համաձայն նույն հոդվածի 6-րդ կետի ա ենթակետի սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ

կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայով՝ Օրենքի Գ կատեգորիայի ընթացակարգով՝ պայմանավորված Օրենքի 12-րդ Գլուխ, 37-րդ հոդվածի(եզրափակիչ մաս և անցումային դրույթներ) պահանջներով: Ներկայացվում է նախնական գնահատման հայտ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն ստանալու նպատակով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացումը՝ նախագծային փաստաթղթին համապատասխան, բացահայտել գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված միջոցառումների կախատեսումները:

Հայտը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

## 6.Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության Կոտայքի մարզի, Չարենցավան համայնքի, Չարենցավան քաղաքի.Արտադրական գոտի Երևանյան 2, Երևանյան 2/6, Գործարանային փողոց 1, Գործարանային փողոց 1/3 հասցեներում նախատեսում է արևային ֆոտովոլտային կայանի կառուցում: Բոլոր տարածքները տեղակայված են «ԱՐՄԱՎՏՈ» ԲԲԸ ի Գործարանի տարածքում:

Նախատեսվում է 15000կՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 10/0.8 ԿՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցում և ենթակայանի միացումը 110/10ԿՎ տրանսֆորմատորային ենթակայանին: Նախատեսվող արևային կայանի նպատակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է բացառապես գործարանի պահանջմունքների բավարարման համար:

Համաձայն անշարժ գույքի վարձակալության 12. 05. 2023թ. պայմանագրի «ԱՐՄԱՎՏՈ» ԲԲԸ իր տարածքից Գործարանային փողոց 1, և 1/3 հասցեներում գտնվող անշարժ գույքից 26308,8քմ /2,63 հա/ մակերեսով շինություն և 5,7հա տարածք վարձակալական հիմունքներով տրամադրվում է «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերությանը: Տարածքի նպատակային նշանակությունը արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի Գործարանային փողոց 1/3 հասցեում 5. 7 հա տարածք վարձակալության հիմունքներով տրամադրվել է «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերությանը:

Համաձայն անշարժ գույքի սեփականության վկայականի, Կոտայքի մարզի, Չարենցավան համայնքում, Չարենցավան ք. Երևանյան փողոց թիվ 2 արտադրական օբյեկտ հասցեում սեփականության իրավունքով 9,9326 հա տարածք տրամադրվում է «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերությանը: Երևանյան փողոց թիվ 2/6 արտադրական օբյեկտ հասցեում սեփականության իրավունքով տրամադրվում է 3,7037հա:

Արևակայանների պանելների մի մասը նախատեսվում է տեղադրել գործարանի տանիքին, մի մասը գործարանի տարածքում:

Գործարանային փ. 1, և Երևանյան փողոց 2 հասցեներում Արևակայանների պանելները նախատեսվում է տեղադրել գործարանի տանիքին: Գործարանային փ. 1/3, և Երևանյան փ. 2/6 հասցեներում արևակայանների պանելները նախատեսվում է տեղադրել գործարանի

տարածքում:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023թ.նոյեմբերի 15-ի, 392-Ա որոշման համաձայն՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է 15000 ԿՎտ հզորությամբ ԼԷ№0752 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2025թ.նոյեմբերի 15-ը գործողության ժամկետով: Արտադրված էներգիան օգտագործվելու է բացառապես սեփական կարիքների համար: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:

## 7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի մշակման հիմքերը

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի կազմման համար հիմք է հանդիսացել.

- Գործունեության իրականացման նախագծային փաստաթղթերը:
- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականները:
- «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեղեկանքը:
- Գործունեության իրականացման Լիցենզիան:

## 8.Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

Արևային կայանը տեղակայված է լինելու «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» «» ՍՊԸ-ին վարձակալության կամ սեփականության իրավունքով պատկանող տարածքում: Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում ծովի մակարդակից տատանվում են՝ 1640.0-1662.0 մետրերի սահմաններում:

«Գեոզոն» ՍՊԸ-ի կողմից կատարվել են գործունեության ենթակա տարածքի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրություններ, կազմվել է ինժեներաերկրաբանական եզրակացություն: Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն:

Ուսումնասիրվել են գոյություն ունեցող փոսորակները, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Տվյալ արևային էլեկտրակայանի հողատարածքի հարթակով գրունտների պարզաբանման համար փորվել են 4 հատ 3 գծամետր խորությամբ հետախուզահորեր, ինչպես նաև 1 հատ հետախուզահոր 2,0 մետր խորությամբ համաձայն ըստ ՇՆՉ I-2.101-2002 (ձեռնարկ ՀՀՇՆ I-2.01-99 նորմերի): Տեղանքի մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա պարզ է դարձել այդ հատվածների երկրաբանալիթոլոգիական կտրվածքները:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզում: Տարածքին բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են հրաբխային սարավանդերի լանջերը: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 1640.0-1662.0 մետրերի սահմաններում

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխանստվածքային ֆացիաներով:

Ուսումնասիրվող տարածքը ներկայացված է վերին պլիոցեն դարակարգի հրաբխային արմատական ապարները՝ բազալտները և դրանց խճաբեկորները, էլյուվիալ-դելյուվիալ նստվածքները կավավազների ավազակավերի տեսքով: Մեր ուսումնասիրվող հարթակով ուսումնասիրվող մինչև 3,0 մետր խորությամբ առկա են էլյուվիալ-դելյուվիալ նստվածքները:

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում «Յուրտ» գոտում: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է զով ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 24-25˚C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 72% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -8,0˚C է, հարաբերական խոնավությունը 81% (ժ.15-ին), թույլ քամիները 2-3 մ/վրկ արագությամբ:: Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,92 մետր: Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 19մ/վ է, 50 տարվա ընթացքում 22 մ/վ:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են բավականին ցածր հորիզոնների վրա:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ և սեյսմատեկտոնական պայմանները Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը Ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ հողաբուսական շերտը, լիցք՝ խճավազ կավավազային լցիչով, ավազային գրունտ պինդ ավազակավային:

Շերտ-1 Հողաբուսական շերտ տարբեր բույսերի արմատներով: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82- ի ժողովածու 1, աղ.1 (9б) II կարգ է:

Շերտ-2 Լիցք՝ խճավազ կավավազային լցիչով: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82- ի ժողովածու 1, աղ.1 (6в) III կարգ է:

Շերտ-3 Ավազային գրունտ, պինդ ավազակավային մասնիկների պարունակությամբ Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82- ի ժողովածու 1, աղ.1 (27в) II կարգ է:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը՝ հետազոտված խորությունների սահմաններում, ներկայացված է գրունտների 3 շերտով:

- Ուսումնասիրվող տեղամասի հարթակներով, որպես հիմնատակ խորհուրդ է տրվում որպես հիմնատակ ընդունել շերտ 3-ի գրունտները:
- Հիմքեր տեղադրելիս Շերտ 3-ի գրունտներում հնարավորինս ապահովել մակերևույթային ջրերի չթափանցումը դեպի այդ խորությունները:

Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Նկար 1






Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ արևակայանի, ենթակայանի, հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման

և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը արդյունաբերական օբյեկտների:

Արևային կայանի տեղաբաշխման վայրն ընտրվել է, հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները:

Գլոբալ հորիզոնական ճառագայթումը Հայաստանի Հանրապետությունում:

Նկար 2



ԱՍԿԵ ԳՐՈՒՊ Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի իրադրության քարտեզ-սխեման՝ըստ WGS կոորդինատային համակարգի

Գծապատկեր 1




«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ՍՊԸ վարձակալված տարածքից ամենամոտ բնակավայրերը գտնվում են 349մ և 676. 5մ հեռավորությունների վրա, հանրապետական ավտոճանապարհը՝ 689,5 մ հեռավորության վրա, միջպետական ավտոճանապարհը՝ մոտ 2,5կմ, տեղական ավտոճանապարհը՝ 1087,3մ հեռավորությունների վրա:

Նախատեսվող գործունեության տարածքը Հրազդան գետից գտնվում է 4,1կմ հեռավորության վրա: Ամենամոտ բնության հուշարձանները «Ավազան» հրաբխային գմբեթ երկրաբանական հուշարձանն է ՝ 2.5 կմ, և «Պեռլիտե փիղ» քարե քանդակ երկրաբանական հուշարձանը ՝ 2.9 կմ հեռավորությունների վրա:

## 9.Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը

**9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը**

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900- 2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանը, ինչպես նաև Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գութանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին:

Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային սարավանդները, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերն ու լավային հոսքերը:

Կոտայքի մարզի բնական պայմաններն ու հարստությունները բազմազան են: Մարզի տարածքն աչքի է ընկնում բարձր լեռնագագաթներով ու խորը կիրճերով, լայնարձակ գետահովիտներով ու մեղմաթեք սարավանդներով, լավաների մեջ գոյացած բազալտե սյունաձև առանձնացումներով՝ անձեռակերտ բազմանիստ պրիզմաների տեսքով:

Նկար 3



Հրազդան գետի ձախափնյա հատվածն իրենից ներկայացնում է Գեղամա զանգվածից հոսող լավային հոսքերից առաջացած սարահարթ՝ ծածկված տարբեր բարձրության բլուրներով:

**9.2. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները**

Տարածաշրջանի աշխարհագրական դիրքն ընդհանուր առմամբ նպաստավոր է: Մարզում Գեղամա լեռները կազմող հրաբխային ապարների մեջ ներծծվող ջրերի աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում, որոնցից են Քառասունակնի, Արզնիի և Գառնիի աղբյուրները: Հրազդան և Ազատ գետերի կիրճերի առանձին հատվածներում առկա են բնական հիանալի հուշարձաններ:

Կոտայքի մարզում են գտնվում Արզնի և Հանքավան առողջարանները (հանքային աղբյուրների մոտ), Մարմարիկի առողջարանային գոտին՝ բազմաթիվ հանգստի ու առողջարանական ճամբարներով, Ծաղկաձորը՝ մարզական օլիմպիական համալիրով:

Չարենցավան քաղաքը գտնվում է Կոտայքի մարզում, Հրազդան գետի ափին, մարզկենտրոնից 12 կմ հարավ-արևմուտք, Երևանից 25Կմ հյուսիս: Հիմնադրվել է 1947-1948թթ, որպես քաղաքային տիպի ավան: 1951թ. ստացել է քաղաքի կարգավիճակ: Չարենցավանը համարվում է արդյունաբերական քաղաք, առկա են մի շարք գործարաններ և արտադրամասեր:

**9.3. Սեյսմիկա և երկրաբանություն**

Տարածաշրջանի և Չարենցավան քաղաքի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին-կավիճ, միջին-միոցենի հասակի մետամորֆիզացված բյուրեղացված թերթաքարերը, մարմարային ապարները, չորրորդական հասակի անդեզիտաբազալտներով և անդեզիտադացիտներով լավաները՝ ծածկված կրաքարերով, նստվածքային և հրաբխային ապարներով, ավազային և խոշորաբեկորային գրունտներով:

**Շրջանի սեյսմիկ պայմանները**. համաձայն ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի նորմատիվային փաստաթղթի՝ ըստ սեյսմիկ հատկության տարածաշրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax=0.4g արագացմամբ, 9 և ավելի բալ սեյսմիկությամբ:

**9.4. Կլիմա և օդային ավազան**

Նախատեսվող գործունեության տարածքի կլիմայական պայմանները ներկայացված են՝ ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Ըստ այդ փաստաթղթի կլիմայական բնութագրի Հրազդան քաղաքը գտնվում է ցուրտ կլիմայական շրջանում՝ ծովի մակերևույթից 1765մ բարձրության վրա: Ամառը զով է, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0- 6.0 մ/վ: Ձմեռը շատ ցուրտ է, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին տատանվում է մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը կազմում է 5.0-7.0 մ/վ:

Նկար 4

Կլիմայական շրջանցման քարտեզ



Չարենցավան քաղաքում ձմեռը երկարատև է, խորը և կայուն ձյան շերտով, նվազագույն ջերմաստիճանը հասնում է մինչև -32$^0$C: Գարունը երկարատև է, զով և խոնավ: Ամառը չափավոր տաք է, առավելագույն ջերմաստիճանը՝ 35$^0$C: Տեղումների տարեկան քանակը հասնում է միջինը՝ 688մմ-ի: Ուժեղ քամիներով օրերի թիվը հասնում է 18-ի: Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 19մ/վ է, 50 տարվա ընթացքում 22մ/վ: Անարև օրերի քանակը տարեկան կազմում է 30 օր: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 92սմ:

Աղյուսակի տեսքով ներկայացվում են մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Հրազդանի օդերևութաբանական կայանի դիտարկումների /Չարենցավան քաղաքի վերաբվերյալ չկա համապատասխան տեղեկատվություն, Հրազդանը վերցվել է անալոգիայով/:

Օդի ջերմաստիճանը, $^{0}$C

Աղյուսակ 1.

| Բնակավայրի անվանումը | Բարձրությունը ծովի մակար-դակից, մ | Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C | | | | | | | | | | | | Միջին տարե-կան | Բա ցար-ձակ նվազա-գույն | | Բա ցար-ձակ առավե-լագույն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | | |
| Ք.Հրազդան | 1765 | -8.0 | -6.4 | -2 | 5 | 10.1 | 13.8 | 17.2 | 17.2 | 13.5 | 7.5 | 1.3 | -5 | 5.4 | -32 | | 35 |

Օդի հարաբերական խոնավությունը

Աղյուսակ 2.

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | Միջին տարեկան, % | Միջին ամսական, ժամը 15-ին | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ըստ ամիսների | | | | | | | | | | | | | Ամենացուրտ ամսվա, % | Ամենատաք ամսվա, % |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | |
| Ք.Հրազդան | 81 | 78 | 74 | 70 | 69 | 69 | 67 | 64 | 64 | 69 | 76 | 79 | 72 | 69 | 46 |

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ | | | | | | | | | | | | | Ձնածածկույթ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան | Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ | Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը | Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | | |
| Ք. Հրազդան | 45 | 57 | 63 | 86 | 100 | 69 | 44 | 31 | 32 | 60 | 55 | 46 | 688 | 132 | 129 | 310 |
| | 40 | 47 | 44 | 52 | 52 | 42 | 48 | 42 | 49 | 64 | 45 | 34 | 64 | | | |

## Քամի

Աղյուսակ 4

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա) | Ամիսներ | Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների | | | | | | | | Անհողմությունների կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Միջին տարեկան արագությունը, մ/վ | Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը | Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հյուսիսային (Հս) | Հյուսիսարևելյան (ՀսԱրլ) | Արևելյան (Արլ) | Հարավարևելյան (ՀվԱրլ) | Հարավային (Հվ) | Հարավարևմտյան (ՀվԱրմ) | Արևմտյան (Արմ) | Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ) | | | | | 25 | 50 | 100 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| Հրազդան | 823,2 | հունվար | 2 | 5 | 11 | 4 | 19 | 39 | 18 | 2 | 27 | 1,9 | 2,1 | 18 | 19 | 22 | 24 |
| | | | 2,3 | 2,4 | 2,0 | 1,4 | 1,9 | 2,3 | 2,4 | 1,7 | | | | | | | |
| | | ապրիլ | 4 | 14 | 19 | 6 | 13 | 21 | 20 | 3 | 15 | 2,1 | | | | | |
| | | | 2,3 | 2,7 | 2,2 | 1,8 | 1,9 | 2,3 | 2,4 | 2,0 | | | | | | | |
| | | հուլիս | 8 | 45 | 35 | 2 | 2 | 3 | 4 | 1 | 7 | 2,8 | | | | | |
| | | | 3,5 | 3,2 | 2,9 | 1,9 | 2,0 | 1,9 | 2,4 | 2,2 | | | | | | | |
| | | հոկտեմբեր | 3 | 12 | 23 | 6 | 11 | 20 | 22 | 3 | 26 | 1,7 | | | | | |
| | | | 2,0 | 2,2 | 2,0 | 1,7 | 1,8 | 2,1 | 2,2 | 2,0 | | | | | | | |

**Օդային ավազանի բնութագիրը.** Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 17 շարժական դիտակետ և 1 անշարժ դիտակայան համաձայն՝ Գլխավոր ( www.armmonitoring.am) էլեկտրոնային կայք էջի:

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2023 թվականի հոկտեմբեր ամսի ն դիտարկումներ են կատարվել նաև Հրազդան և Չարենցավան քաղաքներում: Համաձայն կազմակերպության էլեկտրոնային կայք էջի՝ հոկտեմբեր ամսվա միջին ամսական կոնցենտրացիաների՝ փոշու, ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի արտանետումները օդային ավազան գտնվում են հետևյալ սահմաններում.

- փոշին՝ 0,12 մգ/մ$^3$ (ՍԹԿ՝ 0,15մգ/մ$^3$),
- ազոտի երկօքսիդը՝ 0,02-ից բարձր- մինչև 0,03մգ/մ$^3$ սահմաններում (ՍԹԿ՝ 0,04մգ/մ$^3$),
- ծծմբի երկօքսիդը՝ 0,02-ից բարձր- մինչև 0,03մգ/մ$^3$ սահմաններում (ՍԹԿ՝ 0,05մգ/մ$^3$)։

Չարենցավան քաղաքում հոկտեմբեր ամսվա դրությամբ օդային ավազան արտանետումները գտնվում են ՍԹԿ նորմերի սահմաններում:

### 9.5. Հողային ռեսուրսներ

Կոտայքի մարզն աչքի է ընկնում իր խայտաբղետ հողաբուսական ծածկույթով: Այստեղ հիմնականում գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, իսկ բարձրադիր վայրերում տարածված են ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը, սարավանդային հատվածներում՝ շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերի սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստանները:

Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածված են գորշ դարչնագույն հողերը, իսկ բարձրադիր լեռնային գոտում՝ լեռնամարգագետնային լանդշաֆտը: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրեր:




Հրազդանի տարածաշրջանին բնորոշ են դարչնագույն անտառային հողերը՝ հզոր պրոֆիլով, խորը և ինտենսիվ կավայնացմամբ, վերին հորիզոնների զգալի հումուսացվածությամբ(5-8%), կլանման մեծ ծավալով: Հրազդան գետի առափնյա հատվածներում ներկայացված են միջին հզորության(50-80սմ) լեռնային սևահողերով:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Բուն գործունեության վայրում հողային ֆոնդը ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, քանի որ նախկինում և այժմ տարածքը արդյունաբերական գոտի:

Համաձայն Գլխավոր ( www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի՝ 2022 թվականի 2-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվա-ծության ուսումնասիրման համար դիտարկումներ են իրականացվել նաև Կոտայքի մարզում: Ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.5-2.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 17.0-46.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.1-12.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 4.3-26.7 անգամ, նիկելի պարունակությունը՝ 9.3-28.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.3-2.1 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-10.0 անգամ:

### 9.6.Ջրային ռեսուրսներ

Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից

մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքն (ՋԿՏ) ընդգրկում է 2 հիմնական ջրավազաններ՝ Հրազդան և Քասախ: Հրազդանի ՋԿՏ-ում ընդգրկված են 10 կմ և ավել երկարությամբ 20 գետեր, 1մլն մ$^3$ և ավելի ծավալով 9 ջրամբարներ, բնական լճեր՝ Քարի և Ակնա, ինչպես նաև 7 առաջնային, 4 դերիվացիոն և 7 երկրորդային ջրանցքներ: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Գետառ, Ազատ գետերը: Այստեղ է գտնվում 3032մ բարձրության վրա գտնվող Ակնա լիճը: Գետի և լճի ջրերը մարզում օգտագործվում են ոռոգման նպատակով:

Հրազդանի տարածաշրջանում է գտնվում Հանքավանի ջրամբարը:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանի համար ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 նմուշառման կետերում՝ մակերևութային ջրերի և 8 կետերում՝ ստորերկրյա ջրերի համար:

Մակերևութային ջրերի որակը

Նկար 6



Տարածքի խոշորագույն ջրային ռեսուրսը Սևանա լճից սկիզբ առնող և Արաքս գետի ձախ վտակ՝ Հրազդան գետն է: Գետն ունի 141կմ երկարություն, ավազանի մակերեսը կազմում է 2650կմ² է (առանց Սևանա լճի), սնումը կատարվում է հիմնականում ստորգետնյա(51%) և հալոցքային(37%) ջրերի հաշվին: Գետն աչքի ընկնում գարնանային վարարումներով և հորդացումներով՝ ամռանն ու աշնանը:

Մարմարիկ գետն իր վտակներով հանդիսանում է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մաս:

Ջրային ավազաններն աղտոտման են ենթարկվում մարդու գործունեության հետևանքով, ինչպես նաև տեղումների միջոցով անջատվող աղտոտող նյութերի միջոցով, առաջացնելով ջրավազանների կենսաբազմազանության, որակական կազմի, ջերմային, ռեժիմի փոփոխություններ: Հայաստանի Հանրապետությունում ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման: ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Մոնիթորինգի տվյալների համաձայն՝ կենսածին նյութերի՝ ամոնիում և ֆոսֆատ իոնների կոնցենտրացիաները բարձր են Հրազդան, Ծաղկաձոր և Քասախ գետերի միջին և ստորին հոսանքներում՝ գետերի ջրի մեջ կենցաղային կեղտաջրերի հեռացման հետևանքով:

Համաձայն Գլխավոր ( www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի՝ 2023թ.հոկտեմբեր ամսվա ընթացքում Հրազդան գետում աղտոտվածության ցուցանիշները (մգN/լ)՝ ֆոսֆատ և ամոնիում իոնների կոնցենտրացիաները հիմնականում գերազանցում են 2-րդ դասի ջրերի որակական նորմերի ցուցանիշները:






**Հիդրոերկրաբանական տեսակետից.** Համայնքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են, բայց որոշակի բարդություն են առաջացնում կապված՝ երկրաբանական կառուցվածքի, ապարների լիթոլոգիական կազմի, ռելիեֆի և կլիմայի հետ: Գրունտային ջրերը(շերտային) կապված են դելյուվիալ-պրոլյուվիալ և ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների հետ: Ջրային հոսքերը՝ պայմանավորված կավաավզային, խճային ապարների, լավային հոսքերի ջրառատությամբ, ձևավորում են բազմաթիվ տարբեր դեբիտային ելքերով ջրային ելքեր՝ աղբյուրների տեսքով:

Հրազդան գետի ձախակողմյան վտակների մի մասը գետնի տակ ներծծված ջրերի շնորհիվ գարնանը դուրս են ցայտում՝ «40 աղբյուր» անվանումով:

## 9.7. Կենսաբազմազություն

Հայաստանը տիպիկ լեռնային երկիր է, որտեղ լանդշաֆտները և էկոհամակարգերը կազմում են բարդ բազմաֆունկցիոնալ համակարգ, որոնք նպաստում են հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության ձևավորմանը: Հայաստանի ֆլորայի և ֆաունայի հիմնական կենսատիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ ու տարածքի տոպոգրաֆիական բազմազանությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր գոտու կենսաբազմազանությունը բնորոշվում է իր տեսակային կազմով, որակական ու քանակական ցուցանիշներով: Հանդիսանում է նաև միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ ճանապարհների խաչմերուկ:




Նախատեսվող գործունեության տարածաշրջանը գտնվում է չոր լեռնատափաստանային և օշինդրա-կիսանապատային գոտում, իսկ Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների ձախափնյա լանջերին բնորոշ է լեռնատափաստանային լանդշաֆտային գոտին: Մարզն ունի հարուստ և բազմատեսակ բուսականություն, որը պատկանում է Ապարանի ֆլորիստիկ շրջանին: Ամենատարծված բուսատեսակը կաղնին է, առանձին հատվածներում կաղնուտների տեսքով:

Տարածաշրջանին բնորոշ են ռեկրացիոն-բնապահպանական նշանակության անտառները:

Տարածաշրջանում տիրապետող են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները` համապատասխան տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերով և վերջիններիս բնորոշ կենդանական աշխարհով:

**Բուսական աշխարհ**. Հրազդանի, Չարենցավանի և հարակից տարածքների անտառային էկոհամակարգերին բնորոշ են կաղնուտային, բոխուտային լայնատերև խառը

անտառները ու հետանտառային նոսրաանտառները: Այստեղ աճում են Կաղնի խոշորառէջը(Quercus macranthera), բոխի (Carpinus betulus), բոխու տեսակներ (Aser campestre, Aser trautvetteri), արոսենի (Sorbus umbelata) և այլ՝ հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մասրենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենի (Pyrus sp., P. georgica, P.communis) և խնձորենի (Malus silvestres): Կանաչապատ տարածքներում հանդիպում են եղևնի, նոճի, արևմտյան գիհի, կենսածառ արևելյան, սպիտակ/ լացող ուռենիներ, հացենի, լորենի: Թփուտներից տարածված են յասամանը, հաղարջը, նեղտերև փշատենի և այլն: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները:

Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում լեռնատափաստանային տարախոտեր են, հացազգիների գերակշռությամբ՝ ոզնախոտ(Dactylis Woronovii), սեզ տափաստանային (Phleum phleoides), դաշտավլուկ սոխուկավոր (Poa bulbosa), կելերիա սանրաձև (Koeleris cristata), ցորնուկ ցցամազ (Bromus squarrosus), շյուղախոտ ակոսավոր (Festuca sulcata), մերձալպյան բարձրախոտերից՝ իշառվույտ նեապոլիտական (Melilotus neapolitanus), եղինջ երկտուն (Urtica dioica), ծվծվուկ կտրտված (Silene multifida) և այլն:

Նկար 8




Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Կոտայքի մարզի և տարածաշրջանի ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ Ճավշիր պարսկական (Opopanax persicus Boiss). Ճարտարուկ Արարատի (Draba araratica Rupr), Էվնոմիա կլորատերև (Eunomia rotundifolia C. A. Mey. ),

Ջրահարս փոքր (Najas minor), Աղածաղիկ Կուլպական (Halanthium kulpianum (K. Koch Bunge), Տերեփուկ Թախտաջյանի (Centaurea Takhtajanii) և այլն:

Նկ.9 Ճավշիր պարսկական



**Կենդանական աշխարհ**. տարածաշրջանի կենդանական աշխարհին բնորոշ են անողնաշարավորների՝ միջատների, բզեզների, մորեխների տեսակային բազմազանությունը: Ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են կրիաներ, օձեր, մողեսներ, թռչուններից՝ սև անգղ, կեռնեխ, արտույտ, կաքավ, ծիծեռնակ, ճանճորսներ և այլն, կաթնասուններից՝ եղջերուն, գայլը, գորշ արջ, վայրի խոզ, աղվես, աքիս, կզաքիս, չղջիկներ և այլն:

Կոտայքի մարզում ՀՀ Կարմիր գրքում գրանցված են անողնաշար կենդանիների՝ 62, ողնաշարավոր կենդանիների 28 տեսակներ:

Հրազդան գետի ակունքներում գտնվում է ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված Հարթ խխունջը(Gyraulus laevis):

Կոտայքի մարզում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են՝ Մորեխ հայկականը(Gomphocerus armeniacu), Ալեքսանդր Արագաստաթիթեռ (Lepidoptera), Հաստածղրիդ լայնացած (Bradyporus dilatatus), Թամբակուրծք թարախահան(Mylabris sedilithorax SumakovԵ սևամարմին (Cylindronotus erivanus), ապոլոն (Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko), Հայկական իժ(Viperaa (Montivipera): Թռչուններից՝ գառնանգղ(Gypaetus barbatus Linnaeus), Գիշանգղ(Neophron percnopterus Linnaeus), Օձակեր արծիվ(Circaetus gallicus), Տափաստանային արծիվ(Aquila nipalensis orientalis Hodgson), Կարմրատո բազե(Falco vespertinus Linnaeus), Բվեճ(Bubo bub) և այլն: կաթնասուներից՝ Գորշ արջը(Ursus arctos Linnaeus):



Նկ.10 Ապոլոն Նկ.11 Կարմրատոտ բազե

Տարածաշրջանի ջրային ավազաններում հանդիպում են կարմրախայտ, քուռի բեղլու, կողակ և այլ ձկնատեսակներ:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայուն են Էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, ինչպես նաև բացակայում են կենդանիների միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու, մարդու ազդեցության գոտում գտնվելու պատճառով:

Նախատեսվող գործունեության տարածքում բնական էկոհամակարգերը բացակայում են, քանի որ տարածքը երկար տարիներ գտնվում է արդյունաբերական գոտում: Տարածքում չկան անտառային զանգվածներ, մոտակա անտառային նշանակության հողերը գտնվում են Ծաղկաձորում, Մեղրաձորում:

### 9.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացված է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Նկար 12




Գործունեության տարածքն անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի:

**Բնության հուշարձաններ** Տարածաշրջանում առկա են նաև բնության հուշարձաններ, որոնք համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման հետևյալ են.

Աղյուսակ 5

| ՀՀ | Անվանումը/նկարագիր/ | Տեղադիրքը |
|---|---|---|
| | **Երկրաբանական հուշարձաններ** | |
| 1. | «Պեռլիտե փիղ» քարե քանդակ | Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ |
| 2. | «Ծակ քար» բնական թունել | Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին |
| 3. | «Անանուն» քարե կուտակումներ | Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում |
| | **Ջրաերկրաբանական հուշարձաններ** | |
| 1. | «Հաղպրտանք» աղբյուր | Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա |
| | **Կենսաբանական հուշարձաններ** | |
| 1. | **«Ալպյան գորգ»** | Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանա-պարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպա-սարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա) |

Տարածքը երկար տարիներ գտնվում է արդյունաբերական գոտում և չի առնչվում տարածաշրջանի պատմաշակութային և բնության հուշարձանների հետ, ամենամոտ բնության հուշարձանները «Ավազան» հրաբխային գմբեթ երկրաբանական հուշարձանն է ՝ 2.5 կմ, և «Պեռլիտե փիղ» քարե քանդակ երկրաբանական հուշարձանը ՝ 2.9 կմ հեռավորությունների վրա:

### 9.9. Պատմության և մշակութային հուշարձաններ

Կոտայքի մարզը հանդիսանում է Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից մեկը: Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային հուշարձաններ` եկեղեցական համալիրներ, մատուռներ, տուն-թանգարաններ: Համաձայն Կոտայքի մարզպետարանի էլեկտրոնային կայքի՝ մարզում առկա է 3208 հուշարձան, 811 պահպանման միավոր, 2640 պատմամշակութային անշարժ հուշարձաններ, որոնք ՀՀ պետական սեփականություն են համարվում և օտարման ենթակա չեն: Մարզում կատարված են 18 հնագիտական պեղումներ, բացված են քարեդարյան կայաններ, նախամարդու քարանձավներ, բրոնզեդարյան դամբարանադաշտեր, կիկլոպյան ամրոցներ:

Մարզի տարածքում են գտնվում հայկական հելլենիստական ճարտարապետության՝ մ.թ. 1 -ին դարում Արևի աստված Միհրի պատվին կառուցված Գառնիի տաճարը, Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցին, Քրիստոնեական շրջանի հայկական վիմափոր ճարտարապետության եզակի ու բարձրարվեստ կոթող՝ Այրիվանք-Գեղարդը, Բջնիի բերդը, 13-րդ դարում կառուցված Կեչառիս վանական համալիրը և այլն:

Հրազդանի պատմամշակութային հուշարձանները տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի (Ք.ա. 2-1 հազարամյակից մինչև 12-15-րդ դար), ավելի բազմազան են 12-13-րդ դարերի հուշարձանները (եկեղեցիներ, ամրոցներ, գյուղատեղիներ): Տարբեր են նաև հուշարձանների պահպանվածության աստիճանները՝ սկսած ավերակներից մինչև լավ պահպանվածները:

Հրազդան քաղաքի հուշարձանները ներկայացված են Հավելված 2-ում՝ համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման հավելված 7-ի:

**9.10. Սոցիալ-տնտեսական**

Կոտայքի մարզի տարածքը կազմում է 2076կմ$^2$, համայնքների թիվը՝ 42, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 35: Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին:

Համաձայն Կոտայքի մարզպետարանի էլեկտրոնային կայքի՝ մարզում բնակչությունը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 251000 մարդ, որը կազմում է հարապետության բնակչության թվաքանակի 8,5%-ը: Ազգաբնակչությունը հիմնականում հայեր են՝ 97,6%: Ազգային փոքրամասնություններից ապրում են՝ եզդիներ, ասորիներ, ռուսներ, քրդեր:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, պղինձի, մոլիբդենի, ալյումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելենային սիենիտների, անդեզիտի, հրաբխային խարամների, պեռլիտների, մարմարի, տրավերտինի, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրերով (Հանքավան, Բջնի, Արզնի):

2021թ. մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 278,7 մլրդ դրամի արտադրանք, որից մշակող արդյունաբերությունը՝ 190,5մլդ: Մարզը զարգացած է սննդամթերքի, մետաղական և ոչ մետաղական հանքարդյունաբերության, ցեմենտի արտադրության, էլեկտրաէներգիայի արտադրության ուղղությամբ:

Գյուղատնտեսության ոլորտը մարզի տնտեսության մեջ առաջնային տեղ է զբաղեցնում: Գյուղատնտեսության տեսակետից մարզը բնութագրվում է որպես կաթնաանասնապահական, հացահատիկային ոլորտ: Գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզի գյուղատնտեսության ոլորտի հիմնական ուղղություններն են՝ բուսաբուծությունը և անասնապահությունը: Մարզում գործում է 18 սպանդանոց:

Հրազդանի տարածաշրջանում գործում են Աթարբեկյանի և Գյումուշի հիդրոէլեկտրոկայանները:

Շնորհիվ իր առողջարանային կենտրոնների զարգացած է զբոսաշրջությունը: Էկոտուրիզմի զարգացումը նպաստում է մարզի համայնքների բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:Կոտայքի մարզի առկա բնապահպանական խնդիրներն ընդգրկում են հիմնականում ջրօգտագործման, ընդերքօգտագործման, անտառտնտեսվարման ոլորտները:

Մարզի տեղաբաշխվածությունն ըստ համայնքային տարածաշրջանների.

- Հրազդանի տարածաշրջան - 38, 2 % (3 քաղաքային, 14 գյուղական համայնք)
- Աբովյանի տարածաշրջան - 40,4 % (2 քաղաքային, 30 գյուղական համայնք)
- Նաիրիի տարածաշրջան - 21,4 % (2 քաղաքային, 16 գյուղական համայնք )

Նկար 13




Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է, որը գտնվում է ծովի մակլերևույթից 1600-1750մ բարձրությունների վրա: Մարզկենտրոնից մայրաքաղաք հեռավորությունը 45 կմ է: Քաղաքի վարչական տարածքը կազմում է 15343,72հա, որից գյուղ նշանակության հողատեսքերը կազմում են 11053.08հա, արտադրական նշանակության հողերը՝ 846,63հա, հանգստի գոտիները՝ 35,24հա:

**Չարենցավան** քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում՝ մայրաքաղաք Երևանից 25 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոն Հրազդանից` 12կմ հարավ-արևմուտք, Հրազդան գետի ափին, ծովի մակարդակից 1600-1700 մետր բարձրության վրա: Այն մոտ է Երևան-Սևան ավտոմայրուղուն, քաղաքը հատում է նաև Երևան-Սևան երկաթուղին:
Համաձայն Չարենցավան քաղաքի գլխավոր հատակագծի Չարենցավան քաղաքի բնակչության հաշվարկային թիվը ընդունված է 32.0հազար մարդ: Քաղաքում հաշվարկված է 29650 բնակիչ:; Համայնքը գտնվում է մայրաքաղաքից 34կմ հեռավորության վրա: Քաղաքի տարածքը կազմում է 24525,18 հա: Բնակելի կառուցապատումը կազմում է 149.2: Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները 38.1հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման,և այլ արտադրական նշանակության հողերը 186.69հա, որից 182.6հա արդյունաբերական օբյեկտների: Անտառային հողերը մոտ 29.49հա, գյուղ.նշանակության հողերը 62.65հա: Քաղաքի տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն են արդյունաբերական, շինարարական նյութերի արտադրության և ագրոարդյունաբերական համալիրի ձևավորումը: Քաղաքի Հարավ արևելյան մասում գտնվող արդյունաբերական հանգույցում նախատեսվում է միայն առաջավոր տեխնոլոգիաներով արտադրության տեղադրում, ինչը նպատակաուղղված է շրջակա միջավայրի բարելավմանը: Նորմալ վիճակում են քաղաքի ենթակառուցվածքները: Չարենցավան համայնքում ընդգրկված են հետևյալ բնակավայրերը Չարենցավան,Ալափարս,Արզական,Բջնի,Կարենիս,Ֆանտան: Հյուրերին քաղաքի բնակիչներն առաջինը խորհուրդ են տալիս լինել Եղիշե Չարենցի հյուրասրահ-թանգարանում: Ի դեպ, քաղաքում տեղադրված է բանաստեղծի նվիրված երկու կիսանդրի, որոնցից մեկը հենց հյուրասրահի դիմաց է: Չարենցավանում 2000-ականների սկզբին բացվել է քաղաքի միակ եկեղեցին, որը համարում են «փրկիչ» աղանդավորական տարբեր շարժումների դեմ պայքարում:

## 10. Նախատեսվող գործունեության բնութագիրը, հզորությունները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

**Շահագործման փուլ:** Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Երևանյան 2, 2/6 և Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Արտադրական գործարանային գոտի 1 և 1/3 հասցե հողամասերում՝ 21,9 հա տարածքի վրա: Նախատեսվում է 15000կՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 10/0.8 ԿՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցում և ենթակայանի միացումը 110/10ԿՎ տրանսֆորմատորային ենթակայանին: Նախատեսվող արևային կայանի նպատակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

**10.1 Արևային կայան:** ՖՎ վահանակների զբաղեցրած մակերեսը կազմելու է 7.8 հա: Արևակայանի առավելագույն դրվածքային հզորությունն ըստ վահանակների կազմում է 18000կՎտ, իսկ արևակայանի առավելագույն հզորությունը կազմում է 15000կՎտ: Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 26000 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 690Վտ առավելագույն հզորությամբ: 50 հատ՝ 300կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Արևակայանի կառուցման համար ընտրվել են Trinasolar TSM-NEG21C.20 ֆիրմային արտադրության 22.2% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 690Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2384x1303x33մմ: Փոխակերպիչները Huawei արտադրության են, մոդելը՝ SUN2000-330KTL-H2 300կՎտ ելքային հզորության, ցանցային տեսակի, 6 MPPT (Maximal Power Point Tracker) 28 մուտքերով: Արևային էլեկտրակայանը տեղադրվելու է ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով՝ բետոնե հիմքերով ամրացված հողի վրա և ցինկով գալվանապատված կոնստրուկցիաները ամրացվելու են տանիքին : Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են կոնստրուկցիայով՝ հորիզոնի նկատմամբ 24° թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24մ/վ է, (ՀՀ ՇՆ II-7.01-2011):

**10.2 Ենթակայան** Ենթակայանի կառուցման համար նախատեսվում է տեղադրել 2 հատ Ենթակայան.

9000 կՎտ հզորության, 10/0,8,0,8կՎ լարման տրասֆորմատորային լրակազմ՝ JUPITER-9000K-H1 տիպի, որի մեջ նախատեսված է 0,8/0,4կՎ լարման, 5կՎԱ հզորության սեփական կարիքների չոր տրանսֆորմատոր և 6600 կՎտ հզորության, 10/0,8,0,8կՎ լարման տրասֆորմատորային լրակազմ՝ JUPITER-6000K-H1 տիպի, որի մեջ նախատեսված է 0,8/0,4կՎ լարման, 5կՎԱ հզորության սեփական կարիքների չոր տրանսֆորմատոր

Հաշվառքն իրականացվում է 110կՎ ենթակայանքում:

JUPITER-9000K-H1 լրակազմը բաղկացած է երեք բաժիններից՝

- Ցածր լարման բաժին, որում գտնվում են 0,8կՎ վահանները,
- Տրանսֆորմատորի բաժին, որում տեղադրված է 9000կՎտ հզորության, 10/0,8կՎ լարման յուղային երկփաթույթ տրանսֆորմատոր:
- Բարձր լարման բաժին, որում տեղադրված են 3 հատ 10կՎ HUAWEI մակնիշի էլեգազային անջատիչներ և 10կՎ գերլարման սահմանափակիչներ:

JUPITER-6600K-H1 լրակազմը բաղկացած է երեք բաժիններից՝

- Ցածր լարման բաժին, որում գտնվում են 0,8կՎ վահանները,
- Տրանսֆորմատորի բաժին, որում տեղադրված է 6600կՎտ հզորության, 10/0,8կՎ լարման յուղային երկփաթույթ տրանսֆորմատոր:

Բարձր լարման բաժին, որում տեղադրված են 3 հատ 10կՎ HUAWEI մակնիշի էլեգազային անջատիչներ և 10կՎ գերլարման սահմանափակիչներ

Յուրաքանչյուր տրանսֆորմատորի տակ նախատեսված յուղընդունիչ՝ համաձայն՝ ПУЭ-7 4.2.69 կետի պահանջների:Ենթակայանների ընդհանուր տարածքը՝ 300 մ² է:

**10.3 Ենթակայանի հողանցում և շանթապաշտպանություն.** Հողանցման արտաքին կոնտուրը իրականացվում է 40x4 շերտապողպատով, որը տեղադրվում է հողում 0,7մ խորությամբ և ուղղահայաց էլեկտրոդներով (անկյունակներ) 50x50x5մմ՝ 2մ երկարությամբ:

Բոլոր միացումներն իրականացվում են եռակցումով: Բոլոր մետաղական կոնստրուկցիաներն անհրաժեշտ է միացնել հողանցման կոնտուրին: Հողանցման սարքվածքի դիմադրությունը տարվա յուրաքանչյուր պահին չպետք է գերազանցի 4 Օհմ-ը: Հողանցման սարքվածքի մոնտաժից հետո անհրաժեշտ է ստուգել դիմադրությունը, չբավարարելու դեպքում ավելացնել էլեկտրոդներ:

Կայծակի ուղիղ հարվածներից ենթակայանի պաշտպանությունը իրականացվում է 1 հատ СВ-105 տիպի ե/բ հենասյան վրա տեղադրված շանթարգելով: Ընդհանուր բարձրությունը 13մ է:

**10.4 Ենթակայանի լուսավորություն.** Նախագծով չի նախատեսվում, քանի որ արտադրական տարածքը լուսավորված է:

**10.5 Օդային գիծ, հենասյուներ, մալուխագիծ:** Օդային գիծ, հենասյուներ չեն նախատեսվում:

**Մալուխագիծ.** Մալուխագիծը մոնտաժվում է ԱՍԿԵ ԳՐՈՒՊԻ-ն պատկանող տարածքում:

10կՎ ՄԳ-ի մալուխն ընտրվել է АПвПу 3x185մմ2 և 3x120մմ2 կտրվածքի:

Հաշվառքն իրականացվում է 110Կվ լարման ենթակայանում:

Մալուխն անցկացվում է հողում, ավազե լցվածքով խրամուղու մեջ և պաշտպանվում է ե/բ սալերով: Մալուխի անցկացման խորությունը 1մ է, ընդհանուր երկարությունը 801. 136մ:

Մալուխը տեղադրվում է օձաձև, ջերմային դեֆորմացիաներից խուսափելու համար:

Մալուխը խրամուղու մեջ տեղադրելուց առաջ փորված խրամուղու մեջ պատրաստվում է 100մմ հաստությամբ ավազե տակդիր/հիմք, այնուհետև տեղադրվում է մալուխը և ծածկվում՝ 150մմ ավազե շերտով, որից հետո տեղադրվում է ե/բ սալ և խրամուղին լցվում է ավազակոպիճով:

Ավտոճանապարհները հատելիս մալուխը անցկացվում է պոլիէթիլենային խողովակի մեջ անցկացված:

Մալուխը միացվում է ջերմամեկուսացվող ծայրային կցորդիչներով:

Ե/բ սալերի դասավորությունը խրամուղում (կախված խրամուղու հիմքի չափերից) կատարվում է համաձայն А5-92 տիպարային նախագծի №А5-92-15:

**10.6 Տեսահսկման համակարգ.** Տեսահսկման համակարգ չի նախատեսվում,քանի որ արտադրական տարածքում առկա է:

**10.7 Օպերատորական շինություն** Չի նախատեսվում քանի որ տարածքում առկա է 110ԿՎ ենթակայանը սպասարկող անձնակազմ և օպերատիվ կառավարման շինություն:

**10.8 Կրակմարիչներ.** Տարածքում նախատեսվում են կրակմարիչեր և հրդեհաշիջման վահանակ:

**10.9 Պահեստային շինություն.** Ընկերության տարածքում առկա է ազատ պահեստային շինություն, որը կօգտագործվի խոտանված մասերի և գործածությունից դուրս եկած

վահանակների ժամանակավոր պահման համար:

**10.10 Ցանկապատում.** Տարածքը արդեն իսկ պարսպապատ է ունի մեքենաների համար դարպաս և հետիոտային մուտք և ելք:

## 11. Շինարարության փուլ

**11.1 Շինհրապարակ.**

Որպես շինհրապարակ ծառայելու է «ԱՄԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ գործարանի տարածքը, որը ամբողջովին ապահոված է բոլոր ենթակառուցվածքներով: Տարածքում առկա է ջուր, սանհանգույց ընդհանուր անձնակազմի կարիքները բավարարելու համար:

Տարածքում հողային աշխատանքը բավականին քիչ է հիմնականում հարթ տարածք է և գրունտը հարթացնելու անհրաժեշտություն չկա, խրամուղիների փորելուց առաջացած գրունտը ամբողջովին հետ լիցք է արվելու:
Հանվող հողային զանգվածը ընդհանուր քանակը՝ 2,140մ3, որից բուսահող 140մ3, հետ լիցք՝ 1712մ³: Բուսահողը օգտագործվելու է վերին շերտում, տարածքի բարեկարգման համար: Գրունտի մեջ մոտավորապես 428մ³ ավազ է, որը օգտագործվելու է որպես բարձիկ մալուխների համար:

Ամբողջ շինարարությունը տևելու է 2 տարի, բուն շինարարության իրականացումը հաշվարկվել է 650օր:

Շինհրապարակ հանդիսացող արտադրական տարածքը



| Գործողություն | ամիսներ | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1-2 | 3-4 | 5-6 | 7-8 | 9-10 | 11-12 | 13-14 | 15-16 | 17-18 | 19-20 | 21-22 | 23-24 |
| Տեխպայմանի ստացում, Նախագծային,- նախահաշվ. Աշխատանքներ | ■ | | | | | | | | | | | |
| Նախագծի փորձաքննություններ | | ■ | ■ | ■ | ■ | | | | | | | |
| Նախն. ենթակառուցվածք. լուծումներ | | ■ | ■ | ■ | | | | | | | | |
| Հողային աշխատանքներ | | | | | | ■ | ■ | | | | | |
| Ճանապարհ, ցանկապատ | | | | | | ■ | ■ | | | | | |
| Մետաղական հենառուցվածքների մոնտաժ | | | | | | ■ | ■ | ■ | ■ | | | |
| Օժանդակ շենք-շինությունների կառուցում | | | | | | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | |
| Արևային ՖՎ վահանակների տեղակայում | | | | | | | ■ | ■ | ■ | ■ | | |
| Այլ սարքավորումների տեղակայում | | | | | | | | ■ | ■ | ■ | | |
| Արևային համակարգերի էլեկտրամոնտաժ | | | | | | | | | ■ | ■ | | |
| Տրանսֆորմատորների տեղակայում | | | | | | | | | | ■ | ■ | |
| Կարգաբերման-գործարկման աշխատանքներ | | | | | | | | | | | ■ | ■ |
| Ավարտական փաստաթղթերի ստացում, էլեկտրակայանի գործարկում | | | | | | | | | | | ■ | ■ |

**11. 2 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ.**

Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, որոնք լինելու են Կապալառու կազմակերպության սեփական միջոցները:

**11. 3 Հողային ռեսուրսներ.**

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ՝ կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի և դեպի ենթակայան տանող ստորգետնյա մալուխագծի անցկացման նպատակով խրամուղիների փորման, հողատարածքի ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի կառուցման հողային աշխատանքներ:

Հանվող հոզային զանգվածը ընդհանուր քանակը՝ 2,140մ3, որից բուսահող 140մ3, հետ լիցք՝ 1712մ$^{3}$: Բուսահողը օգտագործվելու է վերին շերտում, տարածքի բարեկարգման համար: Գրունտի մեջ մոտավորապես 428մ$^{3}$ ավազ է, որը օգտագործվելու է որպես բարձիկ մալուխների համար:

Գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ Գեոմեխանիկայի և լեռնային աշխատանքների լաբորատորիա բերված գրունտային նմուշը օգտագործվել է վերջիններիս ֆիզիկամեխանիկական հատկությունների որոշման և հետագա հաշվարկների կատարման համար:

Գրունտի փուրձանմուշների հետազոտության արդյունքների աղյուսակ:

| № | Որոշվող ցուցանիշ | Նմուշի ծածկագիր ըստ պիտակի<br>ԱՍԿԵ արտաքին կայան<br>Մարզ Կոտայք, Երևանյան 2, 2/6, համայնք Չարենցավան, ք Չարենցավան, արտադրական գործարանային գոտի1, 1/3 | |
|---|---|---|---|
| | | **ՀՀ-3 1.0-1.2 մ** | **ՀՀ-4 1.2-1.4 մ** |
| | | Փորձարկման արդյունքները | |
| 1 | pH 1/5 | 7.90 | 7.99 |
| 2 | Կարբոնատ' $CO_3^{2-}$, մգ/կգ | 30 | 30 |
| 3 | Բիկարբոնատ' $HCO_3^-$, մգ/կգ | 457.5 | 549.0 |
| 4 | Քլորիդ' $Cl^-$, մգ/կգ | 6.95 | 6.95 |
| 5 | Սուլֆատ' $SO_4^{2-}$, մգ/կգ | 32.9 | 21.9 |
| 6 | Կալցիում' Ca, մգ/կգ | 120.2 | 112.2 |
| 7 | Մագնեզիում' Mg, մգ/կգ | 14.6 | 4.9 |
| 8 | Կալիում' K, մգ/կգ | հետքեր | հետքեր |
| 9 | Նատրիում' Na, մգ/կգ | 13.83 | 24.0 |
| 10 | Հիմնայնություն, մգ-էկվ/կգ | 8.0 | 9.5 |
| 11 | Թթվայնություն, մգ-էկվ/կգ | չ/հ | չ/հ |
| 12 | Ամոնիում իոն' $NH_4^-$, մգ/կգ | չ/հ | չ/հ |
| 13 | Նիտրատ' $NO_3^-$, մգ/կգ | 4.45 | 1.60 |
| 14 | Չոր մնացորդ, % | 0.0690 | 0.0582 |

**11. 4 Ջրային ռեսուրսներ, կեղտաջրերի հեռացում;**

Աշխատողները օգտվելու են գործարանի գոյություն ունեցող ենթակառուցվածքներից:

**11. 5 Թափոններ.**

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ.

- շինարարական աղբի տեսքով՝ նյութերի մնացորդներ (ավազ, շեբեն, ցեմենտ, պլաստմասե իրեր և այլն),
- աղտոտված լաթեր,պարկեր,
- կենցաղային աղբ
- մետաղական մնացորդներ(մետաղյա լարերի մնացորդներ, տարաներ և այլն):

**11. 6 Սոցիալական.**

Շինարարական աշխատանքներին ներգրավելու են 35 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Ներգրավվելու են համայնքի բնակիչներ, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

**11. 7 Բարեկարգում.**

Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում;

## 11. 8 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը

Արևային Կայանի տեղակայման և մալուխագծի անցկացման աշխատանքները իրականացվելու են ըստ ժամանակացույցի:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ըստ նախատեսված ժամանակացույցի՝ հերթականությամբ.

1.Նախագծային աշխատանքների իրականացում:

2. Հողային աշխատանքներ:

4. Լիցքային աշխատանքներ:

5. Ենթակայանի կառուցում:

6. Հողանցման համակարգի իրականացում:

7.Մետաղական կոնստրուկցիաների հիմքերի տեղադրում, մոնտաժում:

## 13. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, մարդու առողջություն

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Երևանյան 2, 2/6 և Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Արտադրական գործարանային գոտի 1 և 1/3 հասցե հողամասերում՝ 21,9 հա տարածքի վրա: Արևային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը շինարարության և շահագործման փուլերում հիմնականում կապված են՝

- օդային ավազանի ՝ պայմանավորված շինտեխնիկայի , հողային աշխատանքների արդյունքում օդային ավազան ծխագազերի, փոշու արտանետումների,
- ջրային և հողային ռեսուրսների օգտագործման,
- կենսաբազմազանության, լանդշաֆտի փոփոխությունների,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և մարդու առողջության հետ:

Արևային ֆոտովոլտային կայանը էլեկտրաէներգիայի ստացման ամենատարածված ձևերից մեկն է: Դրա միջոցով հնարավոր է դառնում արևի էներգիան կերպափոխելու էլեկտրական հաստատուն կամ փոփոխական հոսանքի, և ունենալ մատչելի գներով էլեկտրաէներգիայի սպառում, ինչը կարևոր է բնառեսուրսային վառելիքից զուրկ Հայաստանի հանրապետության համար:

Գործունեությունն իրականացվելու է ՀՀ կառավարության «Մինչև 2040 թվականը ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր»-ի՝ արևակայանների զարգացման(II. էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթությունները), ինչպես նաև էներգետիկայի զարգացման վերաբերյալ ուղեցույցների պահանջներին համապատասխան: Միաժամանակ պահպանելով ՀՀ կառավարության՝ 2000 թվականի մայիսի 18-ի «1000 Վ-ից բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնների» N 249 և 1998 թվականի մայիսի 26-ի «Էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների չափերը և դրանց օգտագործման կարգը» N313 որոշումների պահանջները և գործող սանիտարա-հակաճարակաբանական կանոնների ու նորմերի, ինչպես նաև 2009 թվականի ապրիլի 2-ի «էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N363-Ն որոշումների պահանջները:

Նախատեսվող գործունեությունն իրականացնելիս հաշվի են առնվել նաև 2006 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՀ կառավարության N1943-Ն որոշմամբ հաստատված՝ «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի VIII բաժնի պահանջները և ցուցումները՝ գործունեության

իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության աստիճանը նվազեցնելու նպատակով:

Գործունեության տարածքը կիսանապատային, անբարեկարգ, համայնքի և բնակիչների կողմից չօգտագործվող, բուսածածկույթից զուրկ տեղանք է: Գործունեության իրականացման ընթացքում ենթակառուցվածքների փոփոխություններ չեն առաջանալու, կատարվելու են միայն հողային աշխատանքներ:

**13. 1 Շինարարության փուլ**

**13.1.1 Օդային ավազան**.

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. տեղեկագրի՝ Արարատյան դաշտում 2022թվականին միջինում արեգակնային ուղիղ ճառագայթման առավելագույն արժեքը կազմել է 125-133Վտ/մ$^2$:

Շինարարության փուլում գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան հնարավոր ազդեցությունները լինելու են ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի արտանետումների, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով, որոնց ազդեցությունները կլինեն կարճաժամկետ: Արևային կայանի համար նախատեսված տարածքը 349մ հեռու է մոտակա բնակավայրից:

Հայտում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնք կկանխարգելեն, կնվազեցնեն օդային ավազան արտանետումները:

**13.1.2 Հողային ռեսուրսներ.**

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը արդյունաբերական օբյեկտների:

Արևային կայանի կառուցման շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով: Տարածքում գերակշռում են խճավազ կավավազային լցիչով, ավազային գրունտ պինդ ավազակավային գրունտները:

Տարածքում տեղ տեղ առկա է բուսահողը՝ ընդհանուր 140մ3 ծավալով: Տարածքում հողային աշխատանքը բավականին քիչ է հիմնականում հարթ տարածք է և գրունտը հարթացնելու անհրաժեշտություն չկա, խրամուղիների փորելուց առաջացած գրունտը ամբողջովին հետ լից է արվելու: Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, հորատանցքերի, տրանսֆորմատորի և յուղընդունիչի տեղադրման, մալուխային խրամուղիների կառուցման, ցանկապատի հենասյուների տեղադրման, մետաղացանցերի անցկացման համար հողային աշխատանքներ: Հանվող հոզային զանգվածը ընդհանուր քանակը՝ 2,140մ3, որից բուսահող 140մ3, հետ լիցք՝ 1712մ3: Բուսահողը օգտագործվելու է վերին շերտում, տարածքի բարեկարգման համար:

Հայտում նախատեսվում են գործունեության իրականացման հետևանքով հողային

ռեսուրսների վրա բացասական ազդեցությանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

**13.1.3 Ջրային ռեսուրսներ.**

Համաձայն «Գեոզոն» ՍՊԸ-ի կողմից կատարված ուսումնասիրության՝ նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են բավականին ցածր հորիզոնների վրա:

Գործունեության տարածքում բացակայում են մակերևութային ջրային հոսքերը: Գործունեության իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների աղտոտում չի նախատեսվում, քանի որ տարածքում բացակայում են գրունտային և մակերևութային ջրահոսքերը:

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողները օգտվելու են գործարանի տարածքում առկա ենթակառուցվածքներից:

**Կեղտաջրերի հեռացում.** Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանավորված՝ արևային կայանի շինարարության փուլում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխություն չի ենթարկվելու, ուստի արևակայանի շինարարության ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

**13.1.4 Կենսաբազմազնություն.**

Արևակայանի և ենթակայանի, տարածքը երկար տարիներ գտնվում է մարդու ակտիվ գործունեության՝ գործարանի տարածքում, կենսաբազմազանությունը բացակայում է:

Գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, ուստի գործունեության իրականացման հետևանքով կենսաբազամազանությանը վտանգ չի սպառնում:

**13.1.5 Թափոններ.**

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինաղբի և կենցաղային աղբի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով: Առաջանալու է.

- մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ սև մետաղի (ծածկագիր՝ 35131100 01 00 4)-10կգ, ալյումինե (ծածկագիր՝ 35310105 01 99 5)-6կգ և պղնձե (ծածկագիր՝ 3531030501013) –8կգ:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)-2կգ/տարի
- Շինարարական նյութերի մնացորդներ/ներառյալ քանդված մեկուսիչներ/, քանդման ընթացքում առաջացած շինարարական աղբի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4) ՝ 25մ³ ծավալով:
- Փորման արդյունքում հանված խոշոր քարաբեկորներով վտանգավոր թափոններով չաղտոտված հողային զանգված(վտանգավորության դաս V դաս,

ծածկագիր՝31401100 08 99 5) ՝ 135 մ$^3$ ծավալով,

- Կենցաղային աղբ՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) 2400կգ/տարի քանակով:
- Եռակցման խարամ (ծածկագիրը՝ 31404800 01 99 4): Թափոնի քանական ցուցանիծը կզնահատվի Կապալառուի կողմից՝ փաստացի արդյունքներով:

Կենցաղային աղբի հաշվարկները.

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է/ըստ ամենածանրաբեռնված հերթափոխի/,

հետևաբար,

$$M=20*120=2400կգ/տարի$$

Հաշվի առնելով, որ նախապատրաստական և շինարարական աշխատանքները տևելու են 7 ամիս, կենցաղային թափոնների քանակը լինելու է ավելի քիչ:

Հայտում նախատեսվում են թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումներ, որոնց ճիշտ կառավարման արդյունքում վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

**13.1.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.**

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքներ, արգելավայրերը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տարածքը երկար տարիներ մարդու ակտիվ գործունեության գոտում է, գործող գործարանի տարածք է:

**13.1.7 Աղմուկ և թրթռում.**

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը ցածր է, քանի որ բացակայում են աղմուկ առաջացնող արտադրություններ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿԸ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Հայտում նախատեսվում են աղմուկի մակարդակի մեղմանն ուղղված միջոցառումներ:

**13.1.8 Արտակարգ իրավիճակներ.**

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

- բնական աղետների(երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում,փոթորիկ),
- հրդեհների առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ գործունեության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հայտում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

**13.1.9 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն.**

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

- շինարարական աշխատանքների ընթացքում աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացման, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առողջության և աշխատանքի անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է նաև էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ: Շինարարության ամբողջ ընթացքում ապահովելու է բժշկական միջոցների բավարար քանակը, հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ազդեցությունները նվազեցնելու նպատակով հայտի կառավարման պլանով նախատեսվում են միջոցառումներ, ուղղված՝ մարդու առողջության և աշխատանքի անվտանգության պահպանմանը:

**13.1. 10 Սոցիալական.**

Գործունեությունն իրականացվելու է Կոտայքի մարզի, Չարենցավան համայնքի,

Չարենցավան քաղաքի.արտադրական գոտու տարածքում :
Գործունեության իրականացման ընթացքում բնակչության շրջանում սոցիալական խնդիրներ, սոցիալական ազդեցությունները կլինեն նվազագույնը.

- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Դրական սոցիալական ազդեցություններ՝ կապված համայնքում նոր ենթակառուցվածքների ստեղծման և նոր աշխատատեղերի բացման հետ:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, գործունեության իրականացման արտադրական տարածքը և հեռավորությունը բնակավայրերից, շինարարության փուլում սոցիալական ազդեցությունները կլինեն շատ ցածր:

**13. 1. 11 Լանդշաֆտ և Բարեկարգում**.

Գործունեության իրականացումն չի առաջացնի լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, չի ունենալու տեսողական ազդեցություն, քանի որ գործունեության տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու՝ արտադրական, գործող գործարանի տարածքում տարածքում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով:

**13.2. Շահագործման փուլ.**

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու արևային կայանի, ենթակայանի անվտանգ շահագործման, ինչպես նաև թափոնների առաջացման հետ:

**13.2.1 Հողային ռեսուրսներ.**

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում:

**13.2.2 Կենսաբազմազանություն**.

Արտադրական գոտում կապված կենսաբազմազանության բացակայության հետ, որևէ փոփոխություն չի կանխատեսվում:

**13.2.3 Թափոններ.**

Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի հնարավոր առաջացող թափոններն են.

- Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված

տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 10տ քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորի՝ առվելագույն և յուղընդունիչի տարողությամբ:

• Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)-2կգ:

• Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4)-4մ³:

• Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3)-0,3մ³:

• քիչ քանակությամբ մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ սև մետաղի (ծածկագիր՝ 35131100 01 00 4)՝-10կգ, ալյումինե (ծածկագիր՝ 35310105 01 99 5)՝-6կգ և պղնձե (ծածկագիր՝ 3531030501013)՝-8կգ:

Շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով հայտում՝ կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

### 13.2.4 Արտակարգ իրավիճակներ.

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել.

- հնարավոր հրդեհային իրավիճակների,
- կլիմայական և այլ երևույթների (երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ազդեցությունները նվազեցնելու նպատակով հայտում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

### 13.2.5 Աղմուկ և թրթռում, մագնիսական դաշտ.

Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական, քանի որ արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա:

Արևակայանի և ենթակայանը նախագծվել են ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ նկատի ունենալով բնակավայրերից ունեցած հեռավորությունը, այն չի կարող զգալի էլեկտրական և մագնիսական դաշտ ստեղծել և որևէ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և բավականին մեծ հեռավորության վրա գտնվող բնակավայրերի վրա:

Արևային կայանի շինարարությունը և շահագործումը կատարվելու է ՀՀ կառավարության 23 նոյեմբերի 2006 թվականի N 1933-Ն որոշման՝ «ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ պահանջներին համապատասխան:

### 13.2.6 Աշխատանքի կազմակերպում և մարդու անվտանգություն, մարդու առողջություն.

Արևակայանի, ենթակայանի անվտանգության գոտու ապահովումը նախատեսել ՀՀ կառավարության որոշումների, տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան:

Արևակայանի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան:

**13. 2. 7 Սոցիալական**.

Արևային կայանի կառուցումը նախատեսում է որոշակի սոցիալական ազդեցություններ:

Մարզում արևային կայանների հիմնումը կստեղծի աշխատատեղեր սոցիալապես անապահով խավի համար և որոշակիորեն կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Շահագործման փուլում մոնիթորինգ իրականացնելու նպատակով ընդգրկվելու են 4-6 աշխատողներ, որոնք աշխատելու են հերթափոխային գրաֆիկով:

Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

## 14. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը (Բնապահպանական կառավարման պլան)

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է գնահատման հայտում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Նախագծի և բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

**14. 1 Շինարարության փուլ.**

**14. 1.1 Օդային ավազան**.

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,

- տարածքում նյութերը պահել ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ծածկի տակ,

-շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, իրականացնել ստուգումներ՝ պարբերաբար,

-բացառել թափոնների այրումը բաց տարածքներում:

**14. 1. 2. Հողային ռեսուրսներ.**

Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով,

- աշխատանքերի ժամանակ հանվող հողային զանգվածը կուտակել անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում,

- հողային զանգվածն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,

- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարել այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,

- շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան կայանվելու է արտադրական տարածքի առանձնացված տեղերում,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ,

- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով:

**14. 1. 3 Ջրային ռեսուրսներ.**

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն նվազագույնը, քանի որ օգտագործվելու են գործարանի բոլոր ենթակառուցվածքները: Միաժամանակ նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- Տարածքի ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,

- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար կօգտագործվի գործարանում առկա տեխնիկական որակի ջուր ,

- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախատնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,

- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսզի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և հողածածկը և ասֆալտածածկը չվնասելու համար:

**14.1.4 Կենսաբազմազանություն.**

Տարածում բացակայում է կենսաբազմազանությունը, ուստի գործունեության իրականացման ընթացքում կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:

**14. 1. 5. Թափոններ.**

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է հետևյալ միջոցառումները.

-խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,

- նյութերի մնացորդները(մետաղական մասեր, մետաղալարեր, ներկեր և այլն) Կապալառու կազմակերպության կողմից հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և տեղափոխել,

- մետաղական մասերի և նյութերի մնացորդները հանձնվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

-շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնի մնացորդներ, եռակցման խարամը կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, անհրաժեշտ քանակի դեպքում կհանձնվեն շինարարական ընկերություններին,

-ավելցուկային հողային գրունտը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր,

- շինհրապարակում կենցաղային աղբը կհավաքվի համապատասխան աղբարկղերում, և կտեղափոխվի աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,

-շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ խառնվելու են կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխվելու են աղբավայր:

**14.1.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.**

Գործունեության տարածքը տարիներ շարունակ գործարանի արտադրական

տարածք է, բացակայում են պատմամշակութային և հնագիտական հուշարձանները:
- շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Ուսումնասիրությունների ընթացքում շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել այլ տեղամասերում, մինչև համապատասխան թույլտվության տրամադրումը:

**14.1.7 Աղմուկ և թրթռում.**

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:

**14.1.8 Արտակարգ իրավիճակներ.**

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հրդեհանվտանգության նորմերը,

- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելու պայմաններին, տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,

- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

**14.1.9 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն**

Շինարարության փուլում աշխատողների առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարականկենցաղային սենքերի» N 2.2..8-

003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, տեղեկատվական, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության արքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

-վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործունեության վայրում խոտանված սարքերի կուտակումները,

-վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները, մի քանի շինարարական տեխնիկական միջոցների աշխատանքը մեկ տեղամասում,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողությունները՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- մալուխային գծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,

- աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ.հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-480* նորմերի:

**14. 1. 10 Սոցիալական.**

**Շինարարության** փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 35 մարդ, որոնք աշխատելու են 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Արևակայանին ամենամոտ գտնվող բնակավայրը Չարենցավան քաղաքն է, որի բնակելի գոտին գործարանի տարածքից գտնվում է 349մ հեռավորության վրա, ուստի գործունեության իրականացումը բնակչության տեղաշարժի դժվարություններ չի առաջացնի: Գործունեության իրականացումը բնակիչներից հողային տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները:

**14. 1. 11 Լանդշաֆտ, բարեկարգում.**

Լանշաֆտի վրա վնասակար ազդեցությունները չի նախատեսվում, քանի որ գործունեությունը իրականացվում է գործարանի տարածքում:

**Բարեկարգում.** շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերել հնարավորինս նախկին տեսքի,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվում տարածքից,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,
- մաքրվելու են պանելների մակերնույթները,

Ենթակայանի տարածքի որոշ հատվածներ բետոնապատվելու են կամ լցվելու են մանրախճով:

Ելնելով գործունեության բնույթից՝ հրդեհավտանգությունն ապահովելու նպատակով, տարածքի ազատ հատվածներում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվելու:

**14.2 Շահագործման փուլ.**

Շահագործման փուլում նս աշխատողները օգտվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքներից, ջրային, հողային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանն ուղղված լրացուցիչ միջոցառումների նախատեսման անհրաժեշտություն չկա:

**14.2.5 Թափոններ.**

Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.

- տրանսֆորմատորի տակ կառուցվելու է 1 հատ առանձին յուղընդունիչ-յուղահավաք առավելագույնը 10տ տարողությամբ, որի մեջ լցվելու է 6տ յուղ:

- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,

- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու են ասֆալտապատող ընկերություններին,

- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- սև մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում առկա փակ պահեստային շենքում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ պայմանագրային հիմունքներով՝ մինչև դրանց արտահանման կամ վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

**14.2.6 Արտակարգ իրավիճակներ**.

Արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- արևակայանն և ենթակայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով,
- գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով նախատեսվում է, մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ 2 աշխատողի միջոցով:

**14.2.7 Աղմուկ և թրթռում.**

- Արևակայանի, ենթակայանի, կառուցման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղնի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձողանների պարը, թրթռումը,
- Արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա:

**14.2.8 Աշխատանքի կազմակերպում և մարդու անվտանգություն, առողջություն.**

Մարդու առողջության պահպանման նպատակով նախատեսվում է.

- ապահովել առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,
- կիրառվող մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի

անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին,

- օդային գծի բոլոր հենարանները համարակալվելու, նշագրվելու և գունավորվելու է՝ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի 3-րդ գլխի 11-րդ և 12-րդ կետերի պահանջներին համապատասխան,
- Էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի:

Արևակայանի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան:

**14.2.9 Սոցիալական**.

Շահագործման փուլում ընդգրկվելու են 2 աշխատողներ՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով, հերթափոխային գրաֆիկով: Գործունեությունը նպաստելու է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, նաև գործարանի էլեկտրաէներգիայի պահանջի բավարարմանը:

## 15. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

| № | Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները | Մեղմող միջոցառման անվանումը | Միջոցառման իրականացման պատասխանատու | Վերահսկող |
|---|---|---|---|---|
| 1 | Շինարարությանփուլ<br>Օդային ավազան<br><br>Շահագործման փուլ | Օդային ավազան արտանետումները մեղմելու նպտակով նախատեսվում է.<br>-շինարարական աշխատանքների և ճանապարհի շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան՝ ըստ անհրաժեշտության: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,<br>- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,<br>-տարածքում նութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,<br>-շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:<br>Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում: | Կապալառու | «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ |
| 2 | Հողային ռեսուրսներ | Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է. | Կապալառու | «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Շահագործման փուլ | - արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով,<br>- հողային զանգվածն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,<br>- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարել այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,<br>- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող ճանապարհները,<br>- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան կայանվելու է առանձնացված տեղում:<br>- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:<br>Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.<br>- հողերի մաքրում և վերականգնում: | | ԲԲԸ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 3 | **Ջրային ռեսուրսներ**<br><br>**Շահագործման փուլ** | Ջրային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.<br>- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տարածքում առկա տեխնիկական որակի ջուր,<br>- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,<br>- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,<br>- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,<br>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի:<br>-արևային կայանի պանելների մաքրումը կկատարվի տարածքում առկա տեխնիկական ջրով: | Կապալառու | «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ |
| 4. | **Թափոններ** | Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որի համար նախատեսվում է.<br>- խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների | Կապալառու | «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Շահագործման փուլ | կուտակումից,<br>- նյութերի մնացորդները(մետաղական մասեր, մետաղալարեր, ներկեր և այլն) հավաքվելու են հատուկ տարրողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն Կապալառու կազմակերպության կողմից, կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,<br>-շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, կքավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,<br>-կենցաղային աղբը հավաքվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,<br>-շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ խառնվելու են կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխվելու են աղբավայր։<br>Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | նախատեսվում է.<br>- կառուցվելու է յուղընդունիչ-յուղահավաք ընդհանուր առավելագույն 10տոննա տարողությամբ:<br>- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,<br>- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,<br>- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,<br>- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին,<br>- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,<br>- սև մետաղի ջարդոնը հանձնվելու է | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով: Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ, որոնք կուտակվելու են տարածքում՝ փակ շենքում՝ վագոն տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: | | |
| **5.** | **Արտակարգ իրավիճակներ** | Արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.<br>- պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային, կրակմարիչներով, տեղադրվելու է 2 հատ ջրի բաքեր,<br>- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն,<br>- տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,<br>- հեղուկ նյութերը կտեղափոխվեն շինարարական հարթակ օգտագործումից առաջ և կպահվեն հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,<br>- օդային գծերը կառուցել էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի (ԷԷՀ ՏԿ) գլուխ VI 46.1 կետի՝ չբնակեցված տարածքներում ապահովելով գետնից 6 մ բարձրություն,<br>- ապահովել օդային գծերի հաղորդալարերի բարձր հաղորդականությունը, մեխանիկական ամրությունը, մթնոլորտային և քիմիական ներգործությունների նկատմամբ կայունությունը,<br>- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման | Կապալառու | «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ |

| | | | | |
|---|---|---|---|---|
